Քննարկվել և հավանության է արժանացել
Օտար լեզուներ առարկաների մեթոդական միավորման
2023թ. հոկտեմբերի «16»-ին կայացած նիստում:
Մեթոդական միավորման նախագահ՝ Լ. Նալչոանյան
Տնօրենի՝ ուս. աշխատանքի գծով տեղակալ՝ Ա. Առաքելյան

Հաստատում եմ՝
ՀՀ Լոռու մարզի Վանաձորի ծովակալ
Իսակովի անվան թիվ 23 հիմնական դպրոցի
տնօրեն՝ Տ. Հովսեփյան
«16» հոկտեմբեր 2023թ.

Վանաձորի ծովակալ Իսակովի անվան թիվ 23 հիմնական դպրոց

2023-2024 ուսումնական տարի

Օտար լեզուներ առարկաների մեթոդական միավորման աշխատանքային պլան

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳԼԽԱՎՈՐ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Բարձրացնել անգլերեն,ռուսաց լեզու և ֆրանսերեն առարկաների դասավանդման արդյունավետությունը:

Բարձրացնել յուրաքանչյուր դասի արդյունավետությունը՝ լայնորեն օգտագործելով համագործակցային ուսուցման, նոր մեթոդների և մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները:

Ապահովել ուսումնական ծրագրերի պահանջների կատարումը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից մշակված առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան:

Հատուկ ուշադրություն դարձնել ուսուցիչ – աշակերտ հարաբերությունների նոր՝ ինտերակտիվ մեթոդների կիրառմանը, աշակերտակենտրոն դասապրոցեսի կազմակերպմանը:

Կազմակերպչական աշխատանքներ տանել երիտասարդ և սկսնակ ուսուցիչների մեթոդամանկավարժական, ուսուցչական պատրաստվածության բարձրացման և ինքնակրթության ապահովման ուղղությամբ:

Ուսումնասիրել և գործնականորեն կիրառել մանկավարժական-մասնագիտական նորագույն նվաճումները՝ հատկապես ուսուցիչների փորձի փոխանակման, ստեղծագործական հաշվետվությունների և բաց դասերի միջոցով:

Մանկավարժների կարևորագույն խնդիրներից մեկը համարել ժամանակակից մեթոդներով դասապրոցեսի կազմակերպումը և դասին յուրաքանչյուր աշակերտին իր հնարավորությունների չափով մասնակից դարձնելը, ապահովելով սովորողների՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված առարկայական չափորոշիչներով նախատեսված նվազագույն մակարդակի յուրացումը:

Զարգացնել սովորողների խոսքի կուլտուրան և գրագետ արտահայտման կարողությունները դասավանդման պրոցեսի և հաղորդակցության ժամանակ:

Դպրոցի սովորողներին, առաջին հերթին դպրոցի բարձր դասարանների աշակերտներին, նախապատրաստել դպրոցականների առարկայական օլիմպիադաների բոլոր փուլերին՝ նրանց ստեղծագործական մտածողության, հմտությունների ու կարողությունների զարգացման միջոցով:

Ուսուցչի աշխատանքը գնահատելիս հաշվի առնել կրթության որակի արդյունավետության բարձրացման ուղղությամբ նրա կողմից կատարած աշխատանքները և տվյալ դասարանի աշակերտների ընդհանուր կարողություններին համապատասխան հնարավոր արդյունքները:

Ուսումնադաստիարակչական աշխատանքները նպատակաուղղել՝

- Դաստիարակել ազգային ու համամարդկային արժեքներ կրող, ակտիվ անձ և քաղաքացի:
- Բացահայտել աշակերտների անձնային որակները և ապահովել ակտիվ մասնակցությունը դասապրոցեսին:
- Սերմանել սեր, հարգանք և հպարտություն հայրենիքի հանդեպ:
- Օգնել աշակերտներին կողմնորոշվելու հասարակական բազմաբնույթ հարաբերություններում՝ տալով գիտելիքների անհրաժեշտ պաշար:
- Դաստիարակել 21-րդ դարի մարտահրավերներին պատրաստ, ինքնավստահ, խելացի, ստեղծագործ, հայրենասեր սերունդ:

2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Ժամկետը	Կատարող պատասխանատուն	Նշումներ
1.	Նախորդ ուսումնական տարվա կատարած աշխատանքների վերլուծություն, բացթողումների վերաբերյալ հանձնարարություններ	2023թ. օգոստոս	Մ/մ նախագահ	
2.	Հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների, նախագծերի ուսումնասիրում և քննարկում	2023թ. օգոստոս	Տնօրենի՝ ուս. աշխ. գծով տեղակալ մ/մ նախագահ	
3.	Սահմանված կարգով կազմակերպել փորձարկվող դասագրքերի, մեթոդական ձեռնարկների քննարկում և ընտրություն /5-րդ, 7-րդ դաս./: Ծանոթանալ վերոգրյալ դասարաններում ներդրվող ՀՊՉ-ին և ծրագրերին: Ծանոթանալ գնահատման նոր կարգին /5-րդ, 7-րդ դաս./՝ հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի 26.17-րդ կետը,ընտրել ձևավորող գնահատման ձևերն ու մեթոդները, քննարկել մ/մ նիստում	2023թ. օգոստոս	Մ/մ նախագահ և անդամներ	
4.	Քննարկել կրթության առանձնահատուկ պայմաններ ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը: Համագործակցել դպրոցի հոգեբանի, աջակցման խմբի անդամների հետ	2023թ. օգոստոս	Տնօրենի՝ ուս. աշխ. գծով տեղակալ մ/մ նախագահ անդամներ աջակցման խումբ	

5.	Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրման, ընդհանրացման և ներդնման նպատակով փոխադարձ դասալսումների կազմակերպում: Կրթական կայքերի միջոցով առաջավոր փորձի ձեռք բերում, մեթոդական մշակումների կազմակերոպում	Պարբերաբար	Տնօրենի՝ ուս. աշխ. գծով տեղակալ մ/մ նախագահ անդամներ	
6.	Ուսուցիչներին նախապատրաստել հերթական պարտադիր ատեստավորմանը/նաև կամավոր/: Ծանոթացնել մեթոդմիավորման անդամներին ուսուցչի որակավորման տարակարգի բնութագրիչներին և դրանց շնորհման չափանիշներին, ուղղորդել նրանց տարակարգ ստանալուն:	Պարբերաբար	Տնօրեն Տնօրենի՝ ուս. աշխ. գծով տեղակալ մ/մ նախագահ	
7.	Կազմակերպել մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ:	Պարբերաբար	Տնօրենի՝ ուս. աշխ. գծով տեղակալ մ/մ նախագահ	
8.	Ուսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպել սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ	Պարբերաբար	Տնօրենի՝ ուս. աշխ. գծով տեղակալ մ/մ նախագահ	
9.	Մանկ. խորհրդում քննարկելուց հետո դպրոցի տնօրենին ներկայացնել առաջարկություն ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ առաջարկություն	2023թ. օգոստոս	Մ/մ նախագահ	
10.	Կատարել ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և ներկայացնել տնօրենին	2023թ. օգոստոս	Մ/մ նախագահ	

11.	Թեմատիկ ծրագրերի քննարկում և պլանների հաստատում, որոնց մեջ ընդգրկված են արդեն հստակեցված գրավորների քանակը /հաստատված մ/մ նիստում և մանկ. խորհրդի նիստում/ (1-ին կիսամյակ՝ 15 շաբաթ 1 օր, 2-րդ կիսամյակ՝ 19 շաբաթ)	2023թ. օգոստոս	Մ/մ նախագահ և անդամներ	
12.	Դպրոցական օլիմպիադաների, առարկայական մրցույթների և այլ միջոցառումների կազմակերպում	1-ին և 2-րդ կիսամյակների ընթացքում	Մ/մ նախագահ և անդամներ	
13.	Ուստարվա ընթացքում նախատեսվող նախագծային աշխատանքների պլանավորում: Ուսումնական նախագծերի թեմայի ընտրություն /7-րդ դասարան/ և պլանի կազմում / հինք ՀՀ ԿԳՄՍ նախարարի 24.02.2023 <<Հանրակրթական ուսումնական հաստատություններում խմբակների գործունեության իրականացման մեթոդական ուղեցույց հաստատելու մասին>> N 301- Ա/2 հրաման/	2023թ. օգոստոս	Տնօրենի՝ ուս. աշխ. գծով տեղակալ մ/մ նախագահ	
14	Ծանոթանալ ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած սովորողին կրթական աջակցություն տրամադրելու նպատակով իրականացվող երկարօրյա ուսուցման կարգին, առաջնորդվելով ՀՀ կառավարության 2023թ. N 216 –Ն որոշմամբ:	2023թ. օգոստոս	Տնօրեն Տնօրենի՝ ուս. աշխ. գծով տեղակալ մ/մ նախագահ	
15	Ծանոթանալ խմբակների ձևավորման նոր կարգին /ՀՀ ԿԳՄՍ նախարարի 24.02.2023 <<Հանրակրթական ուսումնական հաստատություններում խմբակների գործունեության իրականացման մեթոդական ուղեցույց հաստատելու մասին>> N 301- Ա/2 հրաման/	2023թ. օգոստոս	Տնօրեն Տնօրենի՝ ուս. աշխ. գծով տեղակալ մ/մ նախագահ	

16	Ուսումնական նախագծային աշխատանքների իրականացման ընթացքում առաջացած խնդիրների վերհանում և դրանց լուծմանն ուղղված աշխատանքների կազմակերպում	1-ին և 2-րդ կիսամյակների ընթացքում	Տնօրենի՝ ուս. աշխ. գծով տեղակալ մ/մ նախագահ անդամներ	
17	Էլեկտրոնային մատյան/emis.am/-ը վարելու կարգի ներկայացում	2023թ. սեպտեմբեր	Տնօրենի՝ ուս. աշխ. գծով տեղակալ մ/մ նախագահ	
18.	Դասավանդման որակի բարձրացմանն ուղղված նոր տեխնոլոգիաների, մեթոդների կիրառում: Համացանցի տարբեր կայքերի ուսումնական նյութերի ուսումնասիրություն, կիրառում, սեփական նյութերի տեղադրում /պաշարների շտեմարան/	Պարբերաբար	Մ/մ նախագահ	
19.	Հեռավար դասերի կազմակերպման և անցկացման անհրաժեշտության դեպքում դասընթացներին ուսուցիչների մասնակցության ապահովում, Zoom, Teams և այլ հարթակներից օգտվելու ուսուցիչների կարողության ապահովում	Պարբերաբար	Մ/մ նախագահ, անդամներ	
20.	Դասավանդման մեթոդների կատարելագործման, համագործակցային ուսուցման և նոր տեխնոլոգիաների կիրառման նպատակով կազմակերպել փորձարարական դասեր	Պարբերաբար	Տնօրենի՝ ուս. աշխ. գծով տեղակալ մ/մ նախագահ	
21.	Տեղեկացնել ուսուցիչներին հերթական վերապատրաստումների, վեբինարների, օնլայն քննարկումների կազմակերպման մասին	Պարբերաբար	Տնօրենի՝ ուս. աշխ. գծով տեղակալ մ/մ նախագահ	
22.	Օտար լեզուներ առարկաների տասնօրյակի կազմակերպում և անցկացում/փարձարարական դասեր, զեկուցումներ, մրցույթ-վիկտորինա/	2-րդ կիսամյակ	Մ/մ նախագահ և անդամներ	

23.	Հետևել համացանցի ԿԶՆԱԿ-ի կայք էջին, մասնագիտական ամսագրերին, կազմակերպել քննարկումներ	Պարբերաբար	Տնօրենի՝ ուս. աշխ. գծով տեղակալ մ/մ նախագահ	
24.	Սովորողների ԳԿՀ մակարդակը ուսումնասիրելու նպատակով գրավոր աշխատանքների անցկացում	2023թ. դեկտեմբեր 2024թ. մայիս	Տնօրենի՝ ուս. աշխ. գծով տեղակալ մ/մ նախագահ	
25.	1-ին և 2-րդ կիսամյակում ուսումնական ծրագրերի կատարողականի ստուգում: Կատարված աշխատանքների վերլուծություն	2023թ. դեկտեմբեր, 2024թ. հունիս	Տնօրենի՝ ուս. աշխ. գծով տեղակալ մ/մ նախագահ	
26.	Ուշադրության կենտրոնում պահել թույլ առաջադիմություն ունեցող սովորողներին, կազմակերպել նրանց հետ տարվող լրացուցիչ աշխատանքները	Պարբերաբար	Տնօրենի՝ ուս. աշխ. գծով տեղակալ մ/մ նախագահ և անդամներ	
27.	Հետևողական աշխատանքներ տանել առարկայական օլիմպիադաներին մասնակցող սովորողների հետ՝ բարձր արդյունքներ ապահովելու համար	Պարբերաբար	Ուսուցիչներ	